

# «ՄԵՐ ՀՈՂԵՐ»ԷՆ ... «ՄԵՐ ՉՈՀԵՐ»Ը

*Posted on June 14, 2012 by Keghart*



Category: [Opinions](#)





Յարուժ Տեր Դաւիթեան, [Մասիս Շաբաթաթերթ](#), Լոս Անճելլոս



Ամեն անհատ թէ հաւաքականութիւն պէտք է ձգտի զարգացման, ընտրելով նպատակակէտեր եւ ձգտելով հասնիլ անոնց: Չարգացման այս գործընթացը իր հունին մէջ պահելու լաւագոյն միջոցներէն մին, զայն պարբերաբար վերաքննութեան ենթարկելու եւ վերարժեւորելու մէջ կը կայանայ, ստուգելու համար, որ հանգրուան առ հանգրուան կը մօտենանք մեր հետապնդած նպատակներու իրականացման:



Յարուժ Տեր Դաւիթեան, [Մասիս Շաբաթաթերթ](#), Լոս Անճելլոս



Ամեն անհատ թէ հաւաքականութիւն պէտք է ձգտի զարգացման, ընտրելով նպատակակէտեր եւ ձգտելով հասնիլ անոնց: Չարգացման այս գործընթացը իր հունին մէջ պահելու լաւագոյն միջոցներէն մին, զայն պարբերաբար վերաքննութեան ենթարկելու եւ վերարժեւորելու մէջ կը կայանայ, ստուգելու համար, որ հանգրուան առ հանգրուան կը մօտենանք մեր հետապնդած նպատակներու իրականացման:

Անհատի պարագային, ի՛նք կ'որոշէ թէ ի՞նչ ուղիով կ'ուզէ ընթացնել իր կեանքը: Իսկ հաւաքականութեան պարագային, անոր ուղին կը ճշդուի իր մէջէն ծնած առաջնորդներու տեսիլքով, որմէ ազդուած եւ հմայուած, տուեալ հաւաքականութեան բաղադրիչ տարրերը կը նուիրուին այդ տեսիլքի իրականացման:

Մեր պատանեկութեան օրերուն, մենք խանդավառուած կը քալէինք մեր «Մեծ Երազի Ճամբուն Վրայ»ով, պահանջելով «Մեր Հողերը, Մեր Հողերը»: Քայլարշաւներու ու բողոքի ցոյցերու մասնակցելով, մենք կը հաւատայինք, որ կամաց կամաց կը մօտենայինք մեր «Մեծ Երազ»ին: Բայց տարիներու թաւալքին հետ կամաց կամաց սկսանք համոզուիլ, որ մեր թափառումները մեզ չէին տաներ դէպի մեր հողերը: Մեզմէ տարիներ առաջ արդէն, Չարեհ Որբունին համոզուած ըլլալով այդ մէկուն, այսպէս կ'արտայայտուէր. «Դաշնակցական խումբ, գնանք մենք Սասուն: Եւ մենք Սասուն չէինք զացած: Հոտ էր հարցը: Եկած ենք Փարիզ, Աթենք, Հալէպ, Պէյրուս, հեռաւոր Ամերիկաները, ամէն տեղ, ամէն տեղ, բայց ո՛չ Սասուն: Բայց հայը, մինչեւ վերջին հայը, սոթած թելերը լուացքի օճառոտ ջուրին մէջ՝ պիտի երգէ «երթանք մենք Սասուն...» մինչեւ ձեռքերուն մորթին այրուիլը, կծկուիլը»:

Հիմա, միջին տարիք կը բոլորենք: Կը նայինք մեր շուրջը, գտնելու այն տեսլական ունեցող առաջնորդները, որոնք պիտի գծեն հաւաքականութեան հետապնդելիք ուղին: Եւ ի՛նչ կը տեսնենք: Ոչ մեր «Մեծ Երազի» հողերու ջատագով մնացած է եւ ոչ ալ այդ

ճամբուն վրայ քալողներ: Աւելի ցաւալի հարցը այն է, որ մեր հողերէն մեր բռնի տեղահանութիւնէն ետք, հիմա կամովին կը հեռանանք Նաեւ մեզի մնացած պուտ մը հողէն...

Կը հեռանանք, որովհետեւ խորենացիի բնութագրումով, մեզի կը տիրեն «խստասիրտ ու չար թագաւորներ, որոնք ծանր, դժուարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս... կարգ չեն պահպանում, անողորմ են»: Այնքա՛ն անողորմ, որ չեն վարանիր Նոյնիսկ մնացած այդ պուտ մը հողի ընթերքի շահագործումով լեցնելու իրենց գրպանները եւ դուրս վանելու այդ հողի յաւերժութեան ապաւեն մշակները: Այնքա՛ն անողորմ, որ «հաւատը ծախուում է այս ունայն կեանքի համար», ոչ միայն աշխարհական, այլ Նոյնիսկ հոգեւոր առաջնորդներու կողմէ: Կը Նայինք մեր շուրջը ու կը տեսնենք աշխարհի չորս կողմերը ա՛լ աւելի ցիրուցան դարձած հայու բեկորները, որոնք «Մեր Հողեր»ԷՆ վազ անցած, խեղճացած են այնքա՛ն, որ կը մուրան գէթ ճանաչումը «Մեր Չոհերուն, Մեր Չոհերուն»... Այս ընթացքով ու՛ր պիտի հասնինք...

